

Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիայի (Օրիուսի կոնվենցիա) համապատասխանության կոմիտե

Հայաստանի կողմից իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին թիվ V/9a որոշման կատարման առաջընթացի վերանայում

Բովանդակություն

1. Նախաբան2
2. Գործողություններ` ձեռնարկված ի կատարումն թիվ V/9a որոշման ...2
3. Կոմիտեի նկատառումներն ու գնահատականը.....4
4. Եզրակացություններ և առաջարկություններ.....6

I. Նախաբան

1. Իր հինգերորդ նստաշրջանին (Մաստրիխտ, 2014թ. հունիսի 30-ից հուլիսի 1-ը) Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիա) Կողմերի ժողովն ընդունեց թիվ V/9a որոշումը Հայաստանի կողմից իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին (տես ECE/MP.PP/2014/2/Add.1):

II. Որոշումից հետո ձեռնարկված գործողությունների ամփոփ նկարագիր

2. 2014թ. նոյեմբերի 28-ին Կոմիտեն նամակով հիշեցրել էր Կողմին, որ վերջինս կատարի Կողմերի ժողովի խնդրանքը և մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը Կոմիտեին տրամադրի իր առաջին ընթացիկ զեկույցը՝ մանրամասնելով, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել և ինչ արդյունքներ են արձանագրվել թիվ V/9a որոշմամբ նախատեսված առաջարկությունների կատարման ոլորտում:
3. Կողմը տրամադրել է իր առաջին ընթացիկ զեկույցը թիվ V/9a որոշման կատարման վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 26-ին:
4. Կոմիտեի խնդրանքով 2015թ. հունվարի 2-ին քարտուղարությունը Կողմի առաջին ընթացիկ զեկույցը ուղարկել էր ACCC/C/2004/8 և ACCC/C/2009/43 կոմունիկացիաների հասցեատերերին, ինչպես նաև «Դալմա-Սոնա» իրավապաշտպան և բնապահպանական հիմնադրամին. վերջինս դիտորդ կազմակերպություն է, որը հետևում է Հայաստանի կողմից թիվ V/9a որոշման կատարմանը: Բոլորին առաջարկվել է ներկայացնել իրենց դիտարկումները մինչև 2015թ. հունվարի 23-ը: Դիտարկումներ չեն ստացվել:
5. Իր առաջին ընթացիկ զեկույցում Կողմը ներկայացրել է, որ.
 - ա. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փոձաքննության մասին» ՀՀ նոր օրենքն ընդունվել է խորհրդարանի կողմից 2014թ. հունիսի 21-ին և ուժի մեջ մտել 2014թ. օգոստոսի 9-ին: Հիշյալ օրենքի ընդունմամբ ուժը կորցրած է ճանաչվել 1995թ. նոյեմբերի 20-ի «Շրջակա միջավայրի փորձաքննության մասին» օրենքը:
 - բ. Նոր օրենքը ժամկետներ է նախատեսում առաջարկվող գործողությունների վերաբերյալ հանրության վաղ ծանուցման համար այն դեպքում, երբ բոլոր այլ ընտրանքները բաց են և սահմանում գործող տարբեր անձանց (պետական մարմիններ, տեղական մարմիններ, ձեռնարկող) պարտականությունները հանրային լսումներ կազմակերպելու և անցկացնելու հարցում: Այն

նան սահմանում է հանրային լսումների յուրաքանչյուր փուլի համար ծանուցման բովանդակությունը:

- գ. Սահմանվել է, որ հանրային ծանուցման մանրամասն կարգավորումն ամրագրվելու է կառավարության որոշմամբ: «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը» կառավարության որոշումը հանրային քննարկումների փուլում է:
- դ. Նոր օրենքի համաձայն՝ այն գործողությունները, որոնք ենթակա են գնատահման շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսակետից, բաժանվում են երեք դասի («Ա», «Բ» և «Գ»): Հանրային մասնակցության պահանջվող կարգը, այդ թվում՝ ժամկետները, տարբեր են՝ կախված գործողության դասից:
- ե. Նոր օրենքի անգլերեն տարբերակը դեռևս չկա, սակայն բնապահպանության նախարարությունը, արդարադատության նախարարության հետ համատեղ, նախաձեռնել է դրա թարգմանությունը: Պատրաստ լինելուն պես՝ այն կներկայացվի Կոմիտեին:
- զ. Արդարադատության նախարարությունը առաջարկություն է ներկայացրել Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում ավելացնել նոր դրույթներ, որոնք վարչական պատասխանատվություն կնախատեսեն պետական մարմինների, տեղական մարմինների և ձեռնարկողների համար շրջակա միջավայրի փորձաքննության կարգը խախտելու համար:
- է. Բնապահպանության նախարարության կայքը (www.mnp.am) կատարելագործվել է, այդ թվում՝ ծանուցումների համակարգի մասով: Այժմ կայքում տեղադրվում են տեղեկություններ, ի թիվս այլ հարցերի, նաև առաջարկվող ծրագրերի և հանրային լսումների վերաբերյալ: Դիմումի դեպքում նախարարությունը տրամադրում է նաև փորձագիտական եզրակացությունները:
- ը. Արդարադատության նախարարությունն աշխատում է և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխությունների նախագծի վրա, որի դրույթներից մեկով՝ ՀԿ-ներն այլևս իրավունք ունեն հայց ներկայացնելու դատարան՝ ի պաշտպանություն շրջակա միջավայրի: Սրան զուգահեռ փոփոխություններ են մշակվում նաև Վարչական դատավարության օրենսգրքում ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ: Այս նախագծերը դեռևս պաշտոնապես չեն շրջանառվել, սակայն դրանց անգլերեն թարգմանությունները կտրամադրվեն Կոմիտեին այն ժամանակ, երբ Արդարադատության նախարարությունը կներկայացնի նախագծերը գործադիր այլ մարմինների և հանրությանը՝ դիտողությունների և առաջարկությունների համար:
- թ. 2014թ. հոկտեմբերին Արդարադատության ակադեմիան հաստատել է նոր դասընթաց «Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության հիմնախնդիրները»

խորագրով: Դասընթացը պարտադիր է դատավորների պարտադիր վերապատրաստումների և դատավորների թեկնածուների ուսումնական ծրագրերում:

6. Իր քառասունութերորդ ժողովում (Ժնն, 24-27 մարտ, 2015թ.) Կոմիտեն վերանայել է թիվ V/9a որոշման կատարումն իր դռնբաց նիստում՝ հաշվի առնելով ներկա դիտորդների դիտողությունները: Դռնբաց նիստի ընթացքում ծավալված քննարկումից հետո Կոմիտեն սկսել է թիվ V/9a որոշման կատարման իր առաջին ընթացիկ վերանայումը դռնփակ նիստում: Կոմիտեն ընդունել է իր առաջին ընթացիկ վերանայումը իր հիսուներորդ ժողովում (Ժնն, 2015թ. հոկտեմբերի 6-9-ը) և հանձնարարել իր քարտուղարությանն այն ուղարկել Կողմին, ինչպես նաև ACCC/C/2004/8, ACCC/C/2009/43 և ACCC/C/2011/62 կոմունիկացիաների հասցեատերերին և դիտորդներին:

III. Կոմիտեի նկատառումներն ու գնահատականը

7. V/9a որոշման պահանջները կատարելու համար Կողմը պետք է Կոմիտեին տրամադրի ապացույցներ այն մասին, որ.
 - ա. ձեռնարկել է անհրաժեշտ օրենսդրական, կարգավորող և վարչական միջոցները գործնական քայլեր՝ ապահովելու, որպեսզի.
 - i. ՇՄԱԳ-ի կարգին ենթակա գործողությունների, այդ թվում՝ հանրային լսումների շեմը հստակ որոշված լինի:
 - ii. Հանրությունը հնարավորինս վաղ տեղեկացված լինի որոշումների կայացման գործընթացում բոլոր տարբերակների բաց ներկայացման պայմաններում և որ սահմանվեն ողջամիտ ժամկետներ ծրագրին վերաբերող փաստաթղթերի հարցում հանրային քննարկումների և դիտարկումների ներկայացման համար:
 - iii. Հնարավորինս հստակ սահմանվեն տարբեր գործող անձանց (պետական մարմիններ, տեղական մարմիններ, ձեռնարկողներ) պարտականությունները հանրային մասնակցության կարգերի ձևավորման հարցում:
 - iv. Կազմակերպվի շրջակա միջավայրի փորձաքննության վերջնական եզրակացությունների վերաբերյալ հանրության անհապաղ ծանուցում, օրինակ՝ բնապահպանության նախարարության կողմից:
 - բ. Ոչ ուշ, քան 2014թ. սեպտեմբերի 1-ը Կոմիտեին տրամադրի ՇՄԱԳ-ի մասին օրենքի և օրենսդրական այլ ակտերի անզլերեն թարգմանությունը՝ այդ պահի դրությամբ վերանայման համար:
- գ. Ապացույցներ տրամադրի Կոմիտեին այն մասին, որ Կողմի առաջարկած ՇՄԱԳ-ի մասին օրենքի և օրենսդրական այլ ակտերի

նախագծերն ընդունված են ի կատարումն IV/9a որոշման պահանջների:

դ. Վերանայած և հստակեցրած լինի իր օրենսդրությունը, այդ թվում՝ ՀԿ-ների մասին օրենքը և վարչական ընթացակարգերը՝ վերջիններիս դատարան դիմելու իարվունքի մասով ապահովելու Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումը և

ե. Ձեռնարկած լինի անհրաժեշտ միջոցներ՝ բարձրացնելու իրազեկությունը դատական համակարգում՝ խթանելու Կոնվենցիային համապատասխան՝ ներպետական օրենսդրության կիրարկումը:

8. Կոմիտեն ողջունում է Կողմի առաջին ընթացիկ զեկույցը, որը ներկայացվել է ժամանակին, ինչպես և դրանում ներկայացված տեղեկությունները:

9. Վերոհիշյալ պահանջներից յուրաքանչյուրի առնչությամբ Կոմիտեն հանգում է հետյալ եզրակացություններին.

ա. V/9a որոշման 4-րդ պարբերության «գ» կետի i, ii և iii ենթակետերի առնչությամբ Կոմիտեն ողջունում է Կողմի զեկույցը, այդ թվում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի ընդունումը, դրա բովանդակությունը, ինչպես նաև «Հանրային ծանուցման և քննարկումների կարգի» մասին կառավարության որոշման նախագծի նախապատրաստումը: Կոմիտեն, այդուհանդերձ, գտնում է, որ քանի որ Կողմն առ այսօր Կոմիտեին չի տրամադրել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգի» մասին կառավարության որոշման նախագծի անգլերեն թարգմանությունը՝ Կոմիտեն չի կարող գնահատել, թե արդյոք Կողմը կատարել է V/9a որոշման 4-րդ պարբերության «գ» կետի i, ii և iii ենթակետերի պահանջները:

բ. V/9a որոշման 4-րդ պարբերության «գ» կետի IV ենթակետի առնչությամբ Կոմիտեն ողջունում է Կողմի հաղորդումն այն մասին, որ Բնապահպանության նախարարությունը, Արդարադատության նախարարության հետ համատեղ նախաձեռնել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի թարգմանությունը և որ այն կներկայացվի Կոմիտեին պատրաստ լինելուն պես: Կոմիտեն նշում է, սակայն, որ V/9a որոշման 5-րդ պարբերության «ա» կետի համաձայն՝ Կողմը պետք է ներկայացներ Կոմիտեին այդ օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգի» մասին կառավարության որոշման նախագծի անգլերեն թարգմանությունը մինչև 2014թ. սեպտեմբերի 1-ը, այսինքն՝ ավելի քան մեկ տարի առաջ: Այդ պատճառով

Կոմիտեն գտնում է, որ Կողմն առայժմ չի կատարել V/9a որոշման 5-րդ պարբերության «ա» կետի պահանջները:

գ. V/9a որոշման 7-րդ պարբերության ա կետի առնչությամբ, Կոմիտեն ողջունում է Կողմի հաղորդումն այն մասին, որ նախապատրաստվում են փոփոխություններ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում և Վարչական դատավարության մասին օրենսգրքում ՀԿ-ների՝ դատարան դիմելու իրավունքի վերաբերյալ: Կոմիտեն, այդուհանդերձ, գտնում է, որ քանի որ Կողմը դեռևս Կոմիտեին չի տրամադրել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում և Վարչական դատավարության մասին օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների անգլերեն թարգմանությունը, Կոմիտեն չի կարող գնահատել, թե արդյոք Կողմը կատարել է V/9a որոշման 7-րդ պարբերության «ա» կետի պահանջները:

դ. V/9a որոշման 7-րդ պարբերության «բ» կետի առնչությամբ Կոմիտեն ողջունում է Կողմի նախաձեռնությամբ վերոհիշյալ 17-րդ պարբերությունում ներկայացված դասընթացի նախատեսումը արդարադատության համակարգի վերապատրաստման և ուսումնական ծրագրերում, սակայն անհրաժեշտ է համարում ստանալ հետևյալ տեղեկությունները դասընթացի բովանդակության և պահանջների վերաբերյալ.

- i. Դասընթացի պլանի անգլերեն թարգմանությունը,
- ii. Դասընթացի ավարտման համար նախատեսված ժամերի թիվը,
- iii. Արդյոք բոլոր աստյանների և դատարանների դատավորների և դատավորների թեկնածուների համար է դասընթացը պարտադիր կամ, եթե ոչ, որ դատարանների և աստյանների դատավորների համար է այն պարտադիր:
- iv. Արդյոք դատավորները և դատավորների թեկնածուները գնահատվելու են դասընթացի ավարտին:

IV. Եզրահանգումներ

10. Կոմիտեն գտնում է, որ Կողմը դեռևս չի կատարել V/9a որոշման պահանջները, սակայն ողջունում է այդ ուղղությամբ առ այսօր Կողմի ձեռնարկած քայլերը:

11. Կոմիտեն հրավիրում է Կողմին իր երկրորդ ընթացիկ զեկույցի հետ միասին կամ այլ ձևաչափով մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը.

ա. Տրամադրել հետևյալ օրենդրական ակտերի անգլերեն թարգմանությունները.

- i. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի և դրանում առաջարկվող փոփոխությունների,

- ii. «Հանրային ծանուցման և քննարկումների կարգի մասին» կառավարության որոշման նախագծի,
- iii. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխությունների նախագծի,
- iv. ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքի մասով Վարչական դատավարության օրենսգրքի փոփոխությունների նախագծի:

բ.Ներկայացնել ժամանակացույց հետևյալի ընդունման համար.

- v. «Հանրային ծանուցման և քննարկումների կարգի մասին» կառավարության որոշման նախագծի,
- vi. «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագծի,
- vii. Վարչական դատավարության օրենսգրքում` ՀԿ-ների դատարան դիմելու իրավունքի մասով առաջարկվող փոփոխությունների նախագծի:

գ.Տրամադրել դատավորների և դատավորների թեկնածուների համար առաջարկվող շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության արդի խնդիրների մասին ուսումնական դասընթացի պլանը, ինչպես նաև տեղեկություններ այն մասին, թե քանի ժամ է իրենից ներկայացնում դասընթացը, որ դատարանների դատավորներն ու դատավորների թեկնածուները պետք է մասնակցեն այդ դասընթացին և արդյոք նրանք պետք է դասընթացի ավարտին գնահատվեն:

12. Կոմիտեն հիշեցնում է Կողմին, որ Կողմերի ժողովը պլանավորում է V/9a որոշման վերանայում իր վեցերորդ նստաշրջանի ընթացքում:

13. Կողմերի ժողովը վեցերորդ նստաշրջանի ընթացքում կարող է Կոմիտեի զեկույցը կամ առաջարկությունները վերանայելիս որոշում կայացնել այն պատշաճ միջոցների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայի կատարման նպատակով` համաձայն Ի/7-րդ որոշման հավելվածի 37-րդ պարբերության: Կողմերի ժողովը կարող է, կախված կոնկրետ հարցից և հաշվի առնելով Կոնվենցիան չկատարելու պատճառը, աստիճանը և հաճախականությունը, որոշել ձեռնարկել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

ա. Խորհրդատվություն և օժանդակություն տրամադրել Կողմին Կոնվենցիայի կատարման ոլորտում:

բ. Առաջարկություններ անել Կողմին:

գ.Խնդրել, որպեսզի Կողմը ներկայացնի ռազմավարություն, այդ թվում` ժամանակացույց Համապատասխանության կոմիտեին Կոնվենցիայի կատարումն ապահովելու վերաբերյալ և զեկույց այդ ռազմավարության իրականացման վերաբերյալ:

դ.Հանրության կողմից ստացված հաղորդումների պարագայում առաջարկություններ անել Կողմին հանրության անդամի կողմից բարձրացված կոնկրետ խնդրի լուծման նպատակով ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

ե.Ընդունել անհամապատասխանության մասին հռչակագրեր:

զ.Տալ նախազգուշացումներ:

է. Պայմանագրի գործողության կասեցմանը վերաբերող միջազգային իրավունքի կիրառելի նորմերի համաձայն՝ կասեցնել Կողմին՝ Կոնվենցիայի շրջանակներում վերապահված հատուկ իրավունքներն ու արտոնությունները:

ը.Ձեռնարկել պատշաճ դիվանագիտական, արտադատական և խորհրդակցական միջոցներ: